ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 59

ՄԻՀՐԱՆ ՊԵՐՃԻ ԼԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, ՀՀ ՔՕ 188 հոդվածով, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, հիմք ընդունելով հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքի համար "ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ" ԱՁ-ի /որակավորման վկայական՝ 006 2011-12-05, ծածկագիր 2024XEUZ9M/ կողմից կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 06-043-0009-0021 ծածկագրի տակ գտնվող 0,2105հա բնակելի կառուցապատման հողամասում անշարժ գույքը՝ համաձայն հատակագծի.

կիսանկուղ՝ 58քմ արտաքին մակերեսով; 1-ին հարկ՝ 54քմ արտաքին մակերեսով; ձեղնահարկ՝ 74քմ արտաքին մակերեսով; պարիսպ՝ 8,3քմ

2019 թ-ին ինքնակամ կառուցված վերը նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Միհրան Պերճի Լազյանի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 196 330 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք,

գ.Լերմոնտովո, Հեռ. +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 60

"ՀԱԷԿ"-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" ՓԲԸ-ԻՆ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՕ 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Լերմոնտովո համայնքի հողամասը աճուրդով վաճառելու մասին 11.04.2025 թ-ի թիվ 1 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքում 11.04.2025 թ-ին անցկացված աճուրդում հաղթող ճանաչված "ՀԱԷԿ"-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" ՓԲԸ-ին օտարել լոտ1.06-026-0016-0044 ծածկագրով 3,44185հա հողամաս /վարելահող/ աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 7 227 885 /յոթ միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար ութ հայուր ութսուն հինգ/ ՀՀ դրամով:

2.Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո, "ՀԱԷԿ"-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" ՓԲԸ-ի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել "ՀԱԷԿ"-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" ՓԲԸ-ի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 61

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 5-րդ հոդվածի 5-րդ կետով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 15.11.2005 թ-ի թիվ 2247-Ն որոշումով և հիմք ընդունելով "ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական 006 2011-12-05, մուտքագրման ծածկագիրը 2025HJTM7M/ կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ կառավարության 15.11.2005թ-ի թիվ 2247-Ն որոշումով /հավելված 5/ Անտառաշեն /Գազանաբուծական/ համայնքային սեփականություն փոխանցված 06-026-0101-0014 ծածկագրով 0.08301հա արոտավայրի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն ուշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու - համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 62

ԱՐՏՅՈՄ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լերմոնտովո համայնքի հողամասերի տրամադրման մրցույթային հանձնաժողովի՝ հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մասին 2025 թ-ի ապրիլի 11-ի թիվ 01 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ ՀՕ 76-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 0,1500հա մակերեսով արոտավայրը /կադաստրային ծածկագիր 06-026-0016-0048/ համաձայն հավելվածի 25 տարի ժամկետով 2 000 /երկու հազար/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել Հովհաննես Ղոհրաբի Զաքարյանին:

2.Համայնքի հողօգտագործման բաժնին հանձնարարել 10 օրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հ.Զ.Զաքարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**